

## 19-րդ դարի Կարինի հայ հասարակական ընկերությունները

*Չատինյան Զոյա*

*Հանգուցային բառեր. բարենորոգումներ, հասարակական, կրթադաստիարակչական, մշակութային, առևտրատնտեսական ընկերություններ, եվրոպականացում*

### Նախաբան

19-րդ դարի երկրորդ կեսին կարինահայերը լուրջ դերակատարում ունեին Օսմանյան կայսրության տնտեսական, հասարակական, մշակութային ու կրթական կյանքում: Դա պայմանավորված էր «Թուրքիան եվրոպականացնելուն» միտված սուլթան Աբդուլ Մեջիդի 1856 թ. փետրվարի 18-ի «Հաթթը հյումայուն» հրովարտակով: Հրովարտակի խոստումներից ոգևորված արևմտահայերը ինչպես Կ. Պոլսում և Զմյուռնիայում, այնպես էլ գավառներում, մասնավորապես Կարինում, հիմնեցին մի շարք հասարակական, մշակութային և կրթական միություններ ու ընկերություններ, որոնք Կարինի հանրային կյանքում կարևոր դեր խաղացին:

Հայ պատմագրության մեջ Կարինի հայ հասարակական ընկերությունների ստեղծման և գործունեության համառոտ պատմությանն անդրադարձել են Հայր Եփրեմ վարդապետ Պողոսյանը՝ արևմտահայ մշակութային ընկերություններին նվիրված աշխատությունում [2] և Հայր Հակոբ վարդապետ Քոսյանը կարինահայերի վերաբերյալ աշխատությունում [6]: Չնայած դրան՝ հայ պատմագրությունում 19-րդ դարի Կարինի հայ հասարակական ընկերությունները հիմնավոր ուսումնասիրված չեն: Այս իմաստով մեր նպատակն է ժամանակի հայ պարբերական մամուլի հրապարակումների հիման վրա լրացնել այդ բացը: Այդ հրապարակումների ուսումնասիրությունից հանգել ենք այն հետևության, որ 19-րդ դարում Կարինում գործող ընկերությունները, իրենց գործունեության բնույթից ելնելով, կարելի է բաժանել երեք խմբի՝ կրթադաստիարակչական, մշակութային և առևտրատնտեսական:

### 19-րդ դարի Կարինի կրթադաստիարակչական ընկերությունները

Կրթադաստիարակչական բնույթի ընկերությունների շարքում իրենց գործունեությամբ առանձնանում են դպրոցներ ու նախակրթարաններ հիմնելու, աղքատ աշակերտներին գրենական պիտույքներով օգնելու և գործող հանրակրթական հաստատություններին ուսուցիչներով ապահովելու նպատակով հիմնված ընկերությունները: Դրանք էին Կարինի

դպրատան «Արծնյան», «Անձնուէր» «Ուսումնասիրաց», «Վարդանանց», «Դպրանց», «Ընթերցասիրաց», «Ընկերական վարժարանի», «Կրթական» ընկերությունը, «Ազգանվեր հայուհիներ», «Աղքատասիրաց», «Ընթերցասիրաց» ընկերությունները և «Բարձր Հայոց միությունը»:

«Արծնյան» ընկերությունը Կարինում գործող մեզ հայտնի առաջին հայ հասարակական ընկերությունն է: Ընկերությունը հիմնադրվել է 1851 թվականի վերջին Կարինի հոգևոր առաջնորդ Գրիգորիս վարդապետ Զորաբաբեյանի կողմից: Այն անվանակոչվել է ի պատիվ Մեծ Հայքի Արծն քաղաքի [2,73]: «Կարինի դպրատան Արծնյան» ընկերությունը հիմնադրվել է Կարինի դպրոցը (դպրատունը) և եկեղեցին բարեկարգելու նպատակով: Անդամագրության համար սահմանվել է ամսական 60 փարա: Հիմնադրումից մեկ շաբաթ անց ընկերությանը ուներ 600 անդամ [12, 1]:

Ն. Յ. Քոսյանը «Արծնյան» ընկերության հիմնադրումը համարում է 1856 թվականը, իսկ գործունեության ավարտը՝ 1859 թվականը [6, 245], այսինքն՝ մինչև հիմնադրի՝ Կարինի հոգևոր առաջնորդ Գրիգորիս վրդ. Զորաբաբեյանի մահը: Այս պնդումը տեղին չէ, քանզի ընկերության հիմնադրման և հետագա գործունեության մասին գրել են ժամանակի շատ հայ պարբերականներ: Պարբերականները 1852 թվականին արդեն խոսում են մեկ տարի առաջ հիմնադրված ընկերության, 1859 թվականից հետո՝ նաև գործունեության մասին:

«Կարինի դպրատան Արծնյան» ընկերությունը հոգում էր Կարինի հնագույն դպրոցի բոլոր ծախսերը, վերահսկում ուսուցիչների գործունեությունը և աշակերտների առաջադիմությունը: Դպրոցում դասավանդվում էին հետևյալ առարկաները՝ հայագիտություն, կրոնագիտություն, թվաբանություն, հայոց պատմություն և թուրքերեն [10,155]: Դպրոցը յոթամյա էր. այն ավարտողները հնարավորություն էին ստանում ուսումը շարունակել Սանասարյան վարժարանի միջնակարգ Ա դասարանում [5, 240]: Ընկերության ջանքերով 1858 թվականին Կարինի հնագույն Արծրունյաց Ժառանգավորաց վարժարանի աշակերտները մեծ հաջողությունների են հասնում [10, 155]:

«Արծնյան» ընկերությունը Կարինում հիմնել է նաև Գրադարան-Ընթերցարան, որի վերատեսուչ է նշանակվել Պետրոս Օձնեցին [2, 74]: Ընկերության ընթերցարանը հիշատակվում է 1864 թվականի ապրիլի 5-ին Արծրունյաց Ժառանգավորաց վարժարանի աշակերտների քննության առնչությամբ, որը տեղի է ունեցել 1000 և ավելի մասնակիցների ներկայությամբ [11, 128]:

Հիմնադրումից 17 տարի անց ընկերությունը թուլանում է, և ընկերության անդամները հայրենասեր մի քանի հայորդիների աջակցությամբ որոշում են վերակազմավորել «Արծնյանց» ընկերությունը: Կազմավորվում է ընկերության նոր Տնօրեն Վարչություն [17, 3], որի նախագահը Համագասպ քահանան էր, ատենապետը՝ Համագասպ Պալարյանը, ատենադպիրը՝ Մկրտիչ Խաչիկյանը:

Ընկերության ատենապետ Համագասպ Պալարյանը 1870-ական Օսմանյան կայսրության խորհրդարանի 12 հայ պատգամավորներից մեկն էր՝ Կարինի ներկայացուցիչը: Իր գործունեության ընթացքում բազմիցս բարձրացրել է Կարինում քրդերի կողմից կազմակերպված հայերի ջարդերի հարցը [3, 562]:

Նորակազմ ընկերությունը մեծ հանդիսավորությամբ 1868 թվականի հոկտեմբերի 20-ին բացում է ընթերցարան, որի համար նախատեսում էր Կ. Պոլսի իր գործակատարի՝ Տրդատ Ներկիզյանի միջոցով ձեռք բերել Կ. Պոլսի բոլոր հայկական պարբերականները: «Արծնյանց» ընկերությունը հաճախ իր հիմնադրած ընթերցարանի կապակցությամբ կոչվել է «Արծնյան ընթերցասիրաց ընկերություն» [2, 75]:

1869 թվականի գարնանը ընկերությունը Կարինում կազմակերպում է կիրակնօրյա դասընթաց, որոնց հաճախողների թիվը հասնում էր 30-40-ի [18]: Նույն թվականին «Արծնյանց» ջանքերով Կարինում տեղ քահանա Գրիգորի գլխավորությամբ դպրոց է հիմնվում [2, 76]:

19-րդ դարի վերջին Կարինի Արծնյան վարժարանում ուսում էին ստանում 533 տղա, 70 աղջիկ [1, 70]:

1862 թվականին Կարինի «Գայանյան» աղջիկների վարժարանին նյութապես աջակցելու նպատակով հիմնվել է «Ուսումնասիրաց» ընկերությունը [8; 2, 78]: Ընկերությունը գործել է մինչև 1880 թվականը:

Կարինում «Գայանյան» աղջիկների վարժարանի գոյությունը 1862 թվականին կամ դրանից առաջ հարցականի տակ է, քանի որ ժամանակի մի շարք պարբերականներ հավաստում են, որ 1864 թվականին Կարինում չկար աղջիկների համար նախատեսված որևէ կրթական բարձրագույն հաստատություն, ինչը ցավալի են համարում, միաժամանակ նշելով, որ կարինցիները նախատեսում են առաջիկայում այդպիսի վարժարան բացել [11, 135]:

1865 թվականի ապրիլի 5-ին Կարինի եկեղեցում շուրջ 1000 հայորդիների ներկայությամբ տեղի ունեցող Արծրունյան Ժառանգավորաց վարժարանի սաների հանդիսավոր քնության ժամանակ վաստակավոր ուսուցիչ Կարապետ Ս. Զաքարյանցը, իր ճառում գովելով կարինցիներին

արական վարժարան ունենալու և տղաների կրթությանը նպաստելուն ուղղված քայլերը, ցավ է հայտնում, որ մինչև հիմա քաղաքում չկա աղջիկների համար նախատեսված վարժարան: Միաժամանակ նա առաջարկում է այդ նպատակով Կարինում հիմնել ընկերություն, իսկ ընկերության կողմից հիմնվելիք վարժարանը անվանակոչել «Հռիփսիմյան» [20, 38; 11, 127]:

Այս առաջարկությունը հանդիսատեսի կողմից արժանանում է ծափահարությունների, իսկ ներկաններից շատերը պատրաստակամություն են հայտնում անդամագրվել ընկերությանը: Նորաստեղծ ընկերության համար, որի անունը հայ պարբերական մամուլում չենք հանդիպել, սահմանվում է տարեկան 5 դուրուշ պարգևավճար: Կարինի հոգևոր առաջնորդ Հարություն արքեպիսկոպոս Վեհապետյանը ընկերության հայրենանվեր նպատակը խրախուսելու և իր հոտին օրինակ ծառայելու նպատակով 100 դուրուշ կամ 20 բաժին անդամավճար է տրամադրում: Ընկերությունը նախատեսում էր Հռիփսիմյաց վարժարան հիմնելուց հետո էլ շուրջ 3 տարի գործել, որպեսզի անհրաժեշտ դրամագումար ունենա, որը երկար ժամանակ կհոգա վարժարանի ծախսերը [2, 79-80]:

«Արծնեան» ընկերության տնօրենների ժողովի նախաձեռնությամբ [18] 1869 թվականի գարնանը Կարինում բացվում է 1860 թվականին Կ. Պոլսում հիմնված «Անձնուէր» ընկերության մասնաճյուղը: Ընկերության նպատակը պանդուխտ հայերին գրել ու կարդալ սովորեցնելն էր [20, 64]: Ժամանակի պարբերական մամուլը գրում է, որ Կարինում գործող «Անձնուէր» ընկերության մասնաճյուղը [14, 248], ինչպես Եվրոպկիայի մասնաճյուղը, հալածանքների է ենթարկվում [2, 80]:

1861 թվականի փետրվարի 7-ին՝ Վարդանանց տոնախմբության օրը [2, 76] ընթերցարան հիմնելու և կրթական գործը քաղաքում զարգացնելու [8, 1; 6, 245], ազգօգուտ պարբերականներ և ազգային պատմագրությունը վերծանելու նպատակով հիմնվում է Աշարունի ընկերությունը: «Աշարունի» ընկերության գործունեությունը միտված էր հայ պատմագիտական աշխատությունները վերծանելուն:

Ընկերության հիմնադրման թվականը տարբեր աղբյուրներում տարբեր է. եթե Պողոսյանը և Քոսյանը ընկերության հիմնադրման տարեթիվը համարում են 1861 թվականը, ապա ժամանակի պարբերականները [16] նշում են 1863 թվականի փետրվարի 7-ը: Քանի որ և՛ Քոսյանը, և՛ մի շարք պարբերականներ 1861 թվականին Կարինում ընթերցարան հիմնելու նպատակով հիմնված ընկերության անունը չեն նշում, ապա կամ խոսքն իրարից անկախ ընկերությունների մասին է, որոնք ստեղծվել են նույն

նպատակով, մի քանի տարվա տարբերությամբ, կամ հիմնադրման տարբեր տարեթվերի առկայությունը գուտ շփոթմունք է:

Ընկերության հիմնադրման առավել հավանական տարեթիվ համարում ենք 1863 թվականի փետրվարի 7-ը, քանի որ Կ. Պոլսում հրատարակվող «Մասիս» պարբերականը, խոսելով «Աշարունի» (պարբերականում՝ «Աշարունյաց») ընկերության հիմնադրման մասին, վկայակոչում է 1863 թվականի փետրվարի 28-ով թվագրված նամակը, որը ստացել է խմբագրությունը: Նամակում նշվում է, որ նույն թվականի փետրվարի սկզբին մի շարք ուսումնասեր մարդիկ՝ իրենց աղքատ համաքաղաքացիների ընթերցանությանը նպաստելու նպատակով, հիմնել են «Աշարունյաց ընկերությունը» [16]:

1864 թվականի փետրվարի վերջին Կարինի Գավառական ժողովի անդամները Հակոբ Հովսեփյանի գլխավորությամբ հիմնում են «Աշարունի» ընկերության Ընթերցարանը: Ընկերության Ընթերցարանը ունեցել է 12 հողվածից բաղկացած կանոնադրություն, որի 2-րդ հողվածը պարզաբանում էր նաև «Աշարունի» ընկերության հիմնական նպատակը:

1864 թվականին Կարինի «Աշարունյան» ընկերության ընթերցարանում առկա էր 14 հայերեն պարբերական, իսկ Ընթերցարանը ավելի շատ որպես դպրոց էր ծառայում [2, 76-78]: 1878 թվականին ընկերությունը դեռևս շարունակում էր Կարինում կրթադաստիարակչական գործունեություն ծավալել [13]:

1880 թվականից առաջ Կարինում գործել են «Վարդանանց», «Դպրաց», «Ուսումնասիրաց» և «Ընթերցասիրաց» անունը կրող ընկերություններ, որոնք ժամանակի պարբերական մամուլում հիշատակվում են 1880 թվականին՝ միմյանց հետ միավորվելու և «Բարձր Հայոց Միություն» կազմելու կապակցությամբ [2, 81-82]:

Կարինի այս հասարակական չորս ընկերությունները նորանշանակ հոգևոր առաջնորդ գեր. Օրմանյանի առաջարկությամբ և օժանդակությամբ 1880 թվականին միավորվում են և կազմում «Բարձր Հայոց միությունը»: Այս ընկերությունները երկար ժամանակ մտադրություն են ունեցել միավորվելու, քանի որ գտնում էին, որ միությունը ուժ է: Սակայն ֆինանսական և տեխնիկական պատճառներով չէին կարողանում կյանքի կոչել այդ գաղափարը: Միությունը կարճ ժամանակահատվածում իր գործունեության արդյունքում կարողանում է արժանանալ քաղաքի բնակչության համակրանքին: 1881 թվականին ժամանակի հայ պարբերականները մեծ հիացմունքով ու համակրանքով են խոսում «Բարձր Հայոց միության» մասին՝ նշելով, որ այն քաղաքի միակ լուսավոր կետն է

և արժանագույնս ծառայում է ի նպաստ քաղաքի բարօրության և զարգացման: 1881 թվականին միությունը Կարինում հիմնում է Ընթերցարան, որտեղ կային հայերեն, թուրքերեն և ֆրանսերեն լրագրեր: 1880-ական թվականներին Կարինում եղած օտարերկրացի մի ճանապարհորդի հուշերից իմանում ենք, որ Միության կողմից հիմնված Ընթերցարանի ճակատային մասում մեծ տառերով գրված է եղել «Ընթերցարան միության Բարձր Հայոց», սակայն Կարինի կուսակալին դուր չի եկել «Բարձր Հայոց» արտահայտությունը, և նրա պնդմամբ «Բարձր Հայոց» բառերը միությունը ջնջել է: Նույն թվականին միությունը հիմնադրել է նաև Կիրակնօրյա դպրոց, որտեղ դասավանդում էին հայերեն, ֆրանսերեն, թուրքերեն և թվաբանություն: 1881 թվականին միությունը նախնական աշխատանքներ է կատարել Կարինում Մատենադարան հիմնելու ուղղությամբ [2, 87-88]:

«Ընկերական վարժարանի» ընկերությունը հիմնվել է Կարինում 1873 թվականի գարնանը՝ նպատակ ունենալով կրթել ու դաստիարակել քաղաքի մանուկներին: Այդ նպատակով հիմնել է համանուն վարժարան, որտեղ սկզբնապես ուսում է ստացել 40 աշակերտ: 1879 թվականին վարժարանը ուներ 8 դասարան՝ կազմված 70-80 աշակերտից: Նույն թվականի ապրիլի 6-ին ընկերությունը կազմում է վարչություն: Վարչության ատենապետ է ընտրվում Ալեքսանդր Տ. Ներսիսյանը, իսկ ատենադպիր՝ Գրիգոր Մարյանը [2, 82-83; 19]:

1869 թվականի առաջին ամիսներին Կարինում մի քանի ազգանվեր արհեստավորների կողմից հիմնվել է Կարինի «Ուսումնասիրաց» անունը կրող 2-րդ ընկերությունը: Ընկերության նպատակը աղքատ ուսանողներին անվճար գրքեր, թուղթ և ուսման համար անհրաժեշտ այլ պարագաներ մատակարարելն էր [2, 80-81]:

1874 թվականի գարնանը ուսումնասեր մի քանի երիտասարդներ, անհանգստացած քաղաքի կրթական կյանքի անմխիթար վիճակով, Կարինում հիմնում են ընկերություն, որի նպատակը ուսուցման նոր մեթոդով առաջնորդվող դպրոց հիմնելն էր [2, 83]:

Ընկերությունը կազմված էր 40 անդամից, որոնցից յուրաքանչյուրը 6 օսմանյան լիրա է նվիրաբերում դպրոցի հիմնադրման համար: Ընկերությանը 1874 թվականին հաջողվում է Կարինում տղաների համար նախատեսված դպրոց հիմնել [21, 1]: Նորաստեղծ դպրոցում դասավանդելու համար ընկերությունը Կ. Պոլսից ուսուցիչ է հրավիրում, երկուսին էլ վարձակալում է Կարինում: Տղաների համար նախատեսված դպրոցում ուսումնասիրում էին հետևյալ առարկաները՝ հայերեն, թուրքերեն, ֆրան-

սերեն, բուսաբանություն, աշխարհագրություն, պատմություն, կրոն, գեղագրություն, գծագրություն, երաժշտություն և մարմնակրթություն: Հետագայում դպրոցի աշակերտների թիվը ավելացնելու նպատակով Տնօրենների խորհրդի նախաձեռնությամբ դպրոցին կից բացվում է տղաների համար նախատեսված 20 հոգանոց նախակրթարան [7, 246]: 1874 թվականի օգոստոսին ընկերությունը ևս երեք ուսուցիչ է հրավիրում Կ. Պոլսից, մեկը՝ արքունական դպրոցից, մյուս երկուսը՝ Ն. Շահնագարյանց դպրոցից: Ընկերությունը դպրոցի ծախսերը հոգալու համար չէր բավարարվում անդամների անդամավճարներով, այլ հաճախակի աշակերտների հետ թատերական ներկայացումներ էր բեմադրում, որից ստացած հասույթը ամբողջությամբ ուղղվում էր ի նպաստ աշակերտների կրթության: Մայիսի 7-ին ընկերության աջակցությամբ դպրոցի աշակերտները բեմադրում են «Ներսես Մեծ» ողբերգությունը, որին ներկա էին քաղաքի նշանավոր հայ ու թուրք պաշտոնյաներ, հասարակական ու քաղաքական մի շարք գործիչներ [21, 2]:

Կարինի «Կրթական ընկերությունը» հիմնվել է 1876-1878 թվականներին: Ընկերության նպատակն էր. ա) Կարինում նախակրթական դպրոց հիմնել, բ) քաղաքում ընթերցարան բացել և գ) Կ. Պոլսի ազգային լրագրերից մեկը հրատարակել Կարինում: Ընկերության անդամավճարը կազմել է մեկ քառորդ արծաթ մեճիտ [2, 85]:

Կրթական ընկերությունը, բացի իր հիմնական նպատակից՝ լուսավորության տարածումից, մտադրվել էր նաև հրապարակել «Գարուն» անունով թերթ: 1876 թ. ընկերության կազմակերպման հետ միաժամանակ իր աշխատանքներն է սկսում նաև «Կրթական» անունով վարժարանը [1, 73]:

1880 թվականի հունիս-հուլիս ամիսներին Կարինում քաղաքի հոգևոր առաջնորդի նախաձեռնությամբ հիմնվում է 1879 թվականին Կ. Պոլսում հիմնված «Ազգանվեր հայուհիների» ընկերության մասնաճյուղը: Մինչև 1908 թվականը ընկերության գործունեության վերաբերյալ հայ պարբերական մամուլում տեղեկություններ չենք գտել: Նույն թվականին ընկերությունը վերակազմավորվել և անվանվել է «Ազգանվեր հայուհիների միության» և սկսել ազգօգուտ գործունեություն ծավալել: 1910 թվականին միությունը հոգում է օրիորդ Երանուհի Մոմճյանի՝ Կ. Պոլսի Էսայան վարժարանում ուսման ծախսերը, պայմանով, որ նա ուսումը ավարտելուց հետո կվերադառնա Կարին և ուսուցչությամբ կգրադվի: Նույն ժամանակահատվածում «Ազգանվեր հայուհիների միության» ֆինանսական աջակցությամբ Կարինի Հռիփսիմյանց վարժարանում նոր

դասընթաց է ներդրվում: Վերակազմյալ միության ղեկավար մարմինը ընկերության վարչությունն էր. ատենապետ՝ Ե. Տիգրանյան, ատենադպիր՝ Ա. Դարբինյան [2, 85-86]:

1891-1892 թ.թ. Կարինում Վահան Գ. Շապանյանը, ստանալով Կարապետ եպիսկոպոս Քչորյանի համաձայնությունը, հիմնում է «Աղքատասիրաց» ընկերությունը: Ընկերության նպատակը Կարինի հայ կաթոլիկ երեխաներին ուսում տալն էր: Այդ նպատակով «Աղքատասիրաց» ընկերությունը նախատեսում էր նախակրթարան հիմնել, որտեղ ուսումնառությունը բացառապես հայերենով էր լինելու: Ընկերության կազմակերպած առաջին հանգանակության ժամանակ հավաքվել է 2078 դուրուշ [2, 88-89]:

1895 թվականին Կարինում հիմնվել է «Ընթերցասիրաց ընկերությունը»: Ընկերությունը քաղաքի հայ բնակչության շրջանում ընթերցանությանը զարկ տալու նպատակով վարձակալել է շինություն, իր գումարով գնել կամ հայթայթել մեծաքանակ ու բազմահատոր գրքեր: Այն գործել է մինչև 1914 թվականը [6, 246; 2, 89]:

### **19-րդ դարի Կարինի մշակութային ընկերությունները**

Մշակութային բնույթի ընկերություններից հիշատակության արժանի է «Թատերական» կամ «Ազգային թատերական» ընկերությունը [4, 38], որի նպատակն էր քաղաքում թատրոն հիմնել և թատերական ներկայացումներ տալ:

Օգտվելով այն հանգամանքից, որ 1878 թվականին Կարինում գտնվում էր ռուսական բանակը [4, 38] ապրիլի սկզբին այստեղ հիմնվում է «Թատերական» ընկերություն: «Թատերական» ընկերությունը նպատակ ուներ սեփական թատրոնի շենք ունենալ: Ընկերությունը նույն թվականին ստեղծում է վարչություն, որի նախաձեռնությամբ մայիսին Կարինի Մաքսի բազմահայ թաղամասում սկսում է թատերական շենքի շինության աշխատանքները [19; 2, 84-85]: 1878 թվականի օգոստոսի 9-ին ավարտվում է շենքի կառուցումը [1, 73], որի վրա ընկերությունը ծախսում է 1000 ռուբլի [19; 2, 84-85]:

1878 թվականի ապրիլի կեսերին ընկերությունը հիմնում է թատերախումբ, որն էլ ապրիլի 23-ից քաղաքում հանդես է գալիս մի շարք բեմադրություններով: Առաջինը բեմադրվում է «Վահեի պատերազմը Ալեքսանդր Մակեդոնացու դեմ» հայրենասիրական թեմայով ներկայացումը, որը տևել է երեք ու կես ժամ: Ներկայացումները բեմադրվել են տեղական դերասանների ուժերով, ակտիվ մասնակցություն են ունեցել Սանասարյան վարժարանի ուսուցիչներն ու բարձր դասարանի աշա-



կերտները [1, 73-74]: Հ. Նշկյանը վկայում է, որ «ռուսահայ բնավ չկար թատերական ընկերության մեջ, ոչ ալ դերասաններ, կամ դերասանուհիներ բերված Պոլսեն» [4, 38]:

Երբ Բեռլինի կոնգրեսից հետո ռուսական գորքերը հեռանում են Կարինից (1878 թ. օգոստոսի 30), նահանգի Ֆազըլ փաշան թշնամաբար է տրամադրվում թատերական ներկայացումների նկատմամբ և իբր հանգստություն սպասելու պատրվակով, նկատի առնելով ներկայացումներից մեկից հետո հայ-պարսկական ընդհարումը, դրանք որակում է «վնասակար», «ժողովրդի արթնանալուն» նպաստող, և առիթներ փնտրում ընկերության գործունեությունը դադարեցնելու համար [1, 73-74]: Չարըզը, սակայն, չի հաստատում Նշկյանի վկայությունը և նշում է, որ ընկերությունը գործունեությունը չի դադարեցրել 1878 թվականին, իսկ 1883-1900 թ.թ. գործել է ընդհատումներով [5, 219]:

### **19-րդ դարի Կարինի առևտրատնտեսական ընկերությունները**

Առևտրատնտեսական բնույթի «Արհեստավորաց», «Միսական», «Երկրագործական» ընկերությունների գործունեությունը նպատակ էր հետապնդում քաղաքի արհեստավորներին ֆինանսապես օժանդակել և զարգացնել երկրագործությունը:

1860-ականների երկրորդ կեսին Կարինում Մկրտիչ Աղաբալյանի նախաձեռնությամբ հիմնվել է «Արհեստավորաց» ընկերությունը [2, 81]: Ընկերության նպատակը քաղաքում գործող արհեստավորների օգնականներին՝ վարպետներին ֆինանսապես օժանդակելն էր: Ընկերության ատենապետը հիմնադիր Մկրտիչ Աղաբալյանն էր, իսկ ատենադպիրը՝ Մկրտիչ Էֆենդի Պալլարյանը:

Ընկերության հիմնադիր Մկրտիչ Աղաբալյանը ծնվել է 1846 թվականին Կարինի Չայ-գարա թաղամասում: Աշակերտել է Կարինում մեծ հեղինակություն վայելող կրոնագետ, ուսուցիչ Կարապետ Զաքրյանին: 1866 թվականին նշանակվել է Կարինի Արծնյան Մայր վարժարանի կառավարիչ: Պաշտոնավարման տարիներին էլ հղացել է «Արհեստավորաց» ընկերության հիմնադրման գաղափարը: Մ. Աղաբալյանը զբաղեցրել է նաև Երուսաղեմի Ս. Հակոբ Ժառանգավորաց վարժարանի կառավարչի պաշտոնը, իսկ 1883 թվականի հիմնել է Աղաբալյան վարժարանը: Վարժարանը մեծ դեր է ունեցել Կարինի դաշտաբնակ գյուղացի երեխաների կրթությունը կազմակերպելու գործում [9, 1]: 19-րդ դարի վերջին Աղաբալյան վարժարանում ուսում էին ստանում 71 տղաներ [1, 70]:

«Արհեստավորաց» ընկերության դրամագլուխը հասել է 2000 օսմանյան ոսկու [9, 1]: «Արհեստասիրաց» ընկերության շաբաթական անդա-

մավճարը կազմում էր 20 փարա: Հիմնադրումից մի քանի ամիս անց ընկերությունը արդեն ուներ 600-700 անդամ և կանոնադրություն: Ընկերության ղեկավար մարմինը Գործադիր մարմինն էր, որը բաղկացած էր 12 անդամից: Կարճ ժամանակահատվածում ընկերության անդամներին հաջողվում է սեփական միջոցներով քաղաքում երկու առևտրական խանութ բացել [15, 3-4; 2, 81]: Ընկերությունը մեծածավալ աշխատանք է կատարում Կարինում. աջակցում տեղի բնակչությանը, արժանանում նրանց համակրությանը: Չնայած սրան՝ որոշ ժամանակ անց լուծարվում է [9, 1]:

1880 թվականի ամռանը Կարինում Նշկյան ընտանիքի նախաձեռնությամբ հիմնվում է «Երկրագործական» ընկերություն: Ընկերությունը նախատեսում էր Կարինի շրջակայքում տարածք ձեռք բերել՝ 10 նոբատճ տուն կառուցելու նպատակով: Ընկերությունը յուրաքանչյուր տան վրա նախատեսում էր ծախսել 1000 օսմանյան լիրա: Իսկ երկրագործությունը զարգացնելու նպատակով նախաձեռնել էր Ամերիկայից և Եվրոպայից հերկող, ցանող և գտող մեքենաներ ներկրել: Նույն թվականին ընկերությունը Բասեանի կողմերը 2 հայկական գյուղ էր աչքի տակ վերցրել, որոնց տեղանքը հարմարավետ էր երկրագործությամբ զբաղվելու համար և դրանք գնելու նախապատրաստական աշխատանքներ էր իրականացնում [2, 86-87]:

Կարինում 1874-1878 թվականների շրջակայքում արհեստավորներին կրթություն տալու նպատակով հիմնվել է «Սիսական» ընկերությունը [2, 84; 6, 246]:

### **Եզրակացություն**

19-րդ դարում Կարինում գործող ընկերությունները, իրենց գործունեության բնույթից ելնելով, կարելի է բաժանել երեք խմբի՝ կրթադաստիարակչական, մշակութային և առևտրատնտեսական:

Կրթադաստիարակչական բնույթի ընկերություններն էին Կարինի դպրատան «Արձնյան», «Անձնուէր», «Ուսումնասիրաց», «Վարդանանց», «Դպրանց», «Ընթերցասիրաց», «Ընկերական վարժարանի», «Կրթական» ընկերությունը, «Ազգանվեր հայուհիներ», «Աղքատասիրաց», «Ընթերցասիրաց» ընկերությունները և «Բարձր Հայոց միությունը»: Մշակութային բնույթի ընկերություններից հիշատակության արժանի է «Թատերական» կամ «Ազգային թատերական» ընկերությունը, իսկ առևտրատնտեսական բնույթի՝ «Արհեստավորաց», «Սիսական», «Երկրագործական» ընկերությունները:

### Գրականություն

1. Զատիկյան Հ., Կարինի նահանգը 19-րդ դարի երկրորդ կեսին, Երևան, 2013:
2. Հ. Եփրեմ Վ. Պողոսյան, Պատմություն հայ մշակութային ընկերություններու, հ. Բ, Վիեննա, 1963:
3. Հակոբ Պարոնյան, Երկերի ժողովածու, հատոր 4, Երևան, 1965:
4. Նշկյան Հ., Առաջին կայծերը, «Պայքարի» տպարան, 1930:
5. Չարրզ Ղ., Յուշամատեան Բարձր Հայքի. Կարինապատում, Պէյրուք, 1957:
6. Քօսեյան Հ. Յ. «Բարձր Հայք», Կարին քաղաքը, հ. Ա, Վիեննա, 1925:
7. «Արևելյան մամուլ», Չմյուռնիա, 1874, թիվ 6:
8. «Արևելք», 1898, թիվ 3854:
9. «Արևելք», Կ. Պ., 1899, թիվ 4165:
10. «Արծուի Վասպուրականի», 1858, էջ 155:
11. «Արծուի Վասպուրականի», Վան, 1864, թիվ 5:
12. «Արշալույս Արարատյան», Չմյուռնիա, 1852, թիվ 408:
13. «Լոյս», Կ. Պ., 1878, թիվ 769:
14. «Մամուլ», Կ. Պ., 1869, թիվ 31:
15. «Մանգումեի էֆքեար», Կ. Պոլիս, 1870, թիվ 1233:
16. «Մասիս», 1863, թիվ 580:
17. «Մասիս», Կ. Պոլիս., 1868, թիվ 874:
18. «Մասիս», Կ. Պոլիս, 1869, թիվ 926:
19. «Մշակ», Թիֆլիս, 1878, թիվ 144:
20. «Սեր», Կ. Պոլիս, 1864:
21. «Օրագիր», Կ. Պոլիս, 1874, թիվ 1321:

## Армянские общественные организации Карина 19-го века

Чатинян Зоя

### Резюме

*Ключевые слова:* реформы, общественные, учебно-воспитательные, культурные и торгово-экономические организации, европеизация

Во второй половине XIX века армяне Карина играли важную роль в социальной, экономической, культурной и образовательной жизни Османской империи.

Это было обусловлено теми возможностями, которые представились с целью европеизации Османской империи 18 февраля 1856 г. под давлением крупных европейских держав с принятием указа «Хатт-и Хумайюн» султаном Абдул-Меджидом.

Западные армяне, воодушевленные возможностями, которые представлял указ, как в Константинополе и Смирне, так и в провинциях, в частности Карине, основали ряд социальных, культурных, образовательных организаций и союзов, сыгравших важную роль в общественной жизни Карина.

В армянской историографии отец Епрем Погосян в своей работе, посвященной западноармянским культурным организациям, и отец Акоп Косян в своем труде о каринских армянах, кратко рассказали о становлении и деятельности организаций в Карина. Тем не менее, в армянской историографии до конца не изучены армянские общественные организации Карина 19-го века. В этом смысле цель нашего доклада - восполнить этот разрыв на основе армянских периодических изданий того времени.

Изучив эти публикации, мы пришли к выводу, что организации в Карине 19-го века, в соответствии с целью их основания, можно классифицировать на три основные группы: образовательная, культурная и торгово-экономическая.

Среди организаций образовательного характера своей деятельностью выделяются организации, созданные для координации школ и дошкольных учреждений, помощи малоимущим учащимся канцелярскими принадлежностями, обеспечения учителей действующих общеобразовательных учреждений.

Это были организации «Արծնյանց», «Ուսումնասիրաց», «Վարդանանց», «Դպրանց», «Ընթերցասիրաց», «Ընկերական վարժարան», «Կրթական», «Ազգանվեր հայրուհիներ», «Աղբատասիրաց», и союз «Բարձր

Հայրոց».

Одной из культурных организаций, которую стоит упомянуть, является организация «Թատերական», которая поставила перед собой цель создать в городе театр и давать театрализованные представления. Деятельность организации «Աշտուրնի» была направлена на интерпретацию армянских исторических произведений.

Деятельность организаций, занимающихся торгово-экономическими делами, как «Արհեստավորաց», «Միական» и «Երկրագործական», была направлена на финансовую поддержку ремесленников города и развитие сельского хозяйства.

## Armenian Public Associations of Karin in the 19<sup>th</sup> Century

*Chatinyan Zoya*

### Summary

**Keywords:** *reforms, public, social, cultural, educational associations, europeanization*

In the second half of the 19<sup>th</sup> century, the Armenians of Karin played an important role in the economic, social, cultural and educational life of Turkey.

This was due to the aim of Sultan Abdul-Mejid to “Europeanize” the Ottoman Empire on February 18, 1856 with the proclamation of the decree of “Hatt-i Humayun”.

Encouraged by the promises of the proclamation, the Western Armenians in Constantinople, in Smyrna, as well as in the provinces, particularly in Karin, established a number of social, cultural, educational associations and companies, which played an important role in the public life of Karin.

In Armenian historiography, Fathers Yeprem Poghosyan and Hakob Kosyan, in the work devoted to Western Armenian cultural societies, shortly spoke about the establishment and activities of Armenian Social Companies of Armenians in Karin.

However, the Armenian public organizations of the 19<sup>th</sup> century in Karin have not been thoroughly studied in Armenian historiography. So the purpose of our report is to fill that gap based on the Armenian press of the time. From the study of these publications we decided that the companies of 19<sup>th</sup> century Karin, based on the nature of their activities, can be divided into three groups:

educational, cultural, trade and economic.

Among the educational associations, organizations created to coordinate schools and preschool institutions, help poor students with stationery, and provide every essential thing to teachers of general education institutions, stand out for their activities.

Some of the associations were: “Արծնյանց”, “Ուսումնասիրաց”, “Վարդանանց”, “Դպրանց”, “Ընթերցասիրաց”, “Ընկերական վարժարան”, “Կրթական”, “Ազգանվեր հայուհիներ”, “Աղքատասիրաց”, and the unity of “Բարձր Հայոց”.

One of the cultural associations worth mentioning is the “Թատերական”, which was meant to establish a theater in the city and show performances. The “Աշարունի” organization aimed at interpreting Armenian historical works.

The activities of such commercial and economic organizations as “Արհեստավորաց”, “Սիսական” and “Երկրագործական” were intended to show financial support to city workers and develop Agriculture.

Ներկայացվել է 14.10.2022 թ.  
Գրախոսվել է 01.11.2022 թ.  
Ընդունվել է տպագրության 25.11.2022 թ.